Ո Ր Ո Շ Ե Ց

1. Միջնորդությունը բավարարել. հայցի հիմքը լրացնել Միջնորդությամբ նշված հիմքերով, իսկ հայցի առարկան փոփոխել հետևյալ կերպ.

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀԿԳՄՄԵԱՃԱՊՁԲ-26/1-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող անձի 2026 թվականի մայիսի 27-ի թիվ 04/35/18304-2026 ծանուցումը (որոշումը) ճանաչել անվավեր:

- Որպես հետևանք (ածանցյալ պահանջ)՝ ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ Էլեկտրոնային աճուրդի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի 10-ին «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի հետ կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀԿԳՄՄԵԱՃԱՊՁԲ-26/1-1 պայմանագրի շրջանակներում «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի տրամադրած ընդհանուր 32 736 003 (24 552 002+8 184 001) ՀՀ դրամի չափով բանկային երաշխիքի գանձմանը կամ բանկային երաշխիքի այլ կերպով օգտագործմանն ուղղված գործողությունները և պարտավորեցնել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ ձեռնպահ մնալ այդ բանկային երաշխիքների գանձումից կամ այլ կերպով օգտագործումից:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am